

## ԶԵԿՈՅՑ

### Հ. Բ. Բ. ՄԻԱԽԹԵԸՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. — ՑԱՆՉԱԱԽՈՒՄՔԵՐ. — ԶԵՌՆԱՐԻ ԵՒ ՆՊԱՍ

1. — Ինչպէս նախօրդ տարիներ, ներկայ տարուան լնդհանուր ժողովը եւս իր տարեկան նիստը պիտի գումարէ Լոզան, Սեպտեմբեր 7 եւ 21ին, օրակարգի խնդիր ունենալով 1933 տարեցքանի համարատուութիւնը, որ միաժամանակ Միութեան անդամներուն պիտի հաղորդուի ըստ սովորութեան տպագրեալ Տեղեկագրով և Հաշուեկշռով:

2. — Միութեան նորընտիր նախագահին՝ Զարեհ Նուպար Պէյի նախաձեռնութեամբը, կեղը, Վարչ, Ժողովի կողքին գործող և նախապատրաստական աշխատութիւնները կատարելու պաշտօն ունեցող գանագան Յանձնախումբերը վերակազմուած են, նախագահահութեամբ՝ Ելմտական Յանձնախումբի առաջին ճիւղը (Արժեթուղթներ) Տ. Գ. Էտանանի և երկրորդ ճիւղը (Հաշուակալութիւն-Պիւտնէ) Տ. Պ. Էսմէրեանի, Իրաւադիտակրոն Յանձնախումբը՝ Տ. Ա. Արագիանի, Օգնութեան և Բրոբականտի Յանձնախումբը՝ Տ. Տ. Կամսարականի, և Մատենադարանի Յանձնախումբը՝ Տ. Լ. Կիւմիչէրտանի, որ միևնույն ատեն պիտի կատարէ Պատուակալ Վերատեսուչի պաշտօնը:

Ողը. Տ. Գ. Արնապետանի մահուլնէ վերջ, Նուպարեան Մատենադարանին ընդհանուր գրացուցակը պատրաստուած է և Կանոնադիրն աւ վաւերացուած ըլլալով գործադրութեան պիտի դրսի յիշեալ Յանձնախումբին վերին հսկողութեան ներքեւ:

3. — Եզիպտոսի Շրջ. Յանձնաժողովին պատուական անդամներէն Տ. Արտաչէս Հիւրմիւղ Եզիպտոսին վերջնականապէս մեկնելուն պատճառաւ հրաժարած ըլլալով, կեղը, Ժողովը անոր տեղ ընտրեց Տօքթ. Ե. Քէշէնեանը, որ արգէն երկար տարիներ գնահատելի ծառայութիւններ մատուցած էր Միութեան, Գահիրէի վերին Մարմիններուն անդամակցելով:

4. — Եզիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին առաջարկութեան համաձայն, որ կեղը. Վարչ. Ժողովին կողմէ ընդունուած է, Գահիրէի մէջ Միութեան հովանիին ներքեւ պիտի կազմուի Հայ Երիտասարդներու խմբակցութիւն մը, ինչպէս Ամերիկայի մէջ կը գործեն Հ. Բ. Բ. Միութեան Կրտսերները, և միևնույն ատեն պիտի հաստատուի Հայրեգործականի Տաւերօ, որպէս հաւաքատեղի Կրտսերներու ու պարբերար եւս Միութեան Անդամներուն համար:

Այս նոր հմամարկութեան տարեկան ծախոքը պիտի ըլլայ 400 անգլ. ոսկի որուն 300 ոսկին Միութեան անտուկէն պիտի հոգացուի, Գահիրէի տեղական հասոյթներուն վրայէն:

5. — Կեղը. Վարչ. Ժողովը իր վերջին նիստին մէջ որոշեց, ի նշան գնահատութեան, 10,000 ֆրանքի բացառիկ նուիրատուութիւն մը ընել Սերի Մուրատեան Վարժարանին՝ զար այնքան անձնուիրութեամբ որքան եւ ձեռնհասութեամբ կը վարել Գերյ. Միութարեան Հայրերը, ինչպէս նաև 5,000 ֆրանքի գումարով մը մասնակցի նախական ծախոքերուն Բարիզի նորահաստատ Հայ Տնտեսական Կեղրոնին (Centre Economique Arménien), որ կոչուած է օգտակար գեր մը կատարել, զաղթականներու վիճակը բարելաւելու ծառայելով:

6. — Նոնաշնեան Միջազգային Օֆիսը, մեր դիմումին վրայ, Միութեան տրամադրութեան տակ զրած ըլլալով 50,000 ֆրանս. ֆրանքի բացառիկ նպաստագրամ մը, ըստ համաձայնութեան այդ գումարը հաւաքատական տրամադրութեամբ է Սուրբոյ, Պուլկարիոյ, Աթէնքի և Սելանիկի շրջաններուն, անդործ և չքաւոր զաղթական ընտանիքներու ապրուսա և զործ հայթայթելու ծառայող միջացներ ընձեռնելու համար, ինչպէս նաև զարձեալ Սելանիկի գաղթականներէն վերջերս հանուած զաղթական ընտանիքներու տեղաւորման պէտքերուն յատկացուելու համար, առաջուց պատրաստուած նախահաշիւներու հիման վրայ: